

ՀԱՐՑԱՇԱՐ

Հարց 1. Ակտիվների՝ ներկա արժեքով գնահատման (չափման) հիմունքը ենթադրում է, որ ակտիվները գնահատվում (չափվում) են՝

- ա. դրանց գնման գնով
- բ. դրամական միջոցների ապագա գուտ մուտքերի գեղչված գումարի չափով, որոնք պետք է ստեղծեն ակտիվները կազմակերպության սովորական գործունեության ընթացքում
- գ. դրամական միջոցների ապագա գուտ ելքերի գեղչված գումարի չափով, որոնք պետք է ստեղծեն ակտիվները կազմակերպության սովորական գործունեության ընթացքում
- դ. այն գումարով, որը կվճարվեր, եթե ներկա պահին միևնույն կամ համանման այլ ակտիվ ձեռք բերվեր

Հարց 2. Հետաձգված հարկային ակտիվները (պարտավորությունները) հաշվապահական հաշվեկշռում ներկայացվում են՝

- ա. որպես ընթացիկ ակտիվներ (պարտավորություններ)
- բ. որպես ոչ ընթացիկ ակտիվներ (պարտավորություններ)
- գ. ընթացիկ հարկային ակտիվների (պարտավորությունների) հետ նույն տողային հոդվածում
- դ. նույն դասակարգմամբ, ինչ հետաձգված հարկի գծով ծախսը:

Հարց 3. Շնորհների հետ վերադարձումը կատարվում է՝

- ա. առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես եկամտի ճշգրտում
- բ. առաջին հերթին՝ ճանաչվում է որպես ծախս, իսկ չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) մնացորդը գերազանցող մասով վերադարձումը կատարվում է այդ մնացորդի հաշվին
- գ. առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին, իսկ այդ մնացորդը գերազանցող մասով վերադարձումը դիտվում է որպես ակտիվ
- դ. առաջին հերթին՝ տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին:

Հարց 4. Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ՝

- ա. արտարժույթով դրամային և ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը
- բ. արտարժույթով դրամային և ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով:
- գ. արտարժույթով դրամային հոդվածները պետք է ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը, իսկ ոչ դրամային հոդվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով
- դ. արտարժույթով դրամային հոդվածները պետք է ներկայացվեն գործարքի օրվա փոխարժեքով, իսկ ոչ դրամային հոդվածները ներկայացվեն (վերահաշվարկվեն)՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքը:

Հարց 5. Արտադրական գործունեության մեջ օգտագործելու պայմանով անհատույց ստացված հիմնական միջոցների հետ վերադարձի արտացոլում.

- ա. Դեբետ 721
Կրեդիտ 111
- բ. Դեբետ 421
Կրեդիտ 111
- գ. Դեբետ 728
Կրեդիտ 111:

Հարց 6. Դեբիտորական պարտքի վերաձևակերպում որպես երկարաժամկետ փոխառություն.

- ա. Դեբետ 145
Կրեդիտ 221
- բ. Դեբետ 221
Կրեդիտ 412
- գ. Դեբետ 412
Կրեդիտ 221:

Հարց 7. Մանրածախ առևտրում ստացված ապրանքների վաճառքի գնի և ինքնարժեքի տարբերության արտացոլում.

- ա. Դեբետ 216
Կրեդիտ 614
- բ. Դեբետ 216
Կրեդիտ 217
- գ. Դեբետ 217
Կրեդիտ 614:

Հարց 8. Նկարագրեք դեպք, երբ ոչ ռեզիդենտի կողմից մատուցված ծառայության դիմաց հայաստանյան աղբյուրներից ստացված եկամտի մասով կատարվող վճարներից չի գանձվում ոչ ռեզիդենտի շահութահարկ (որպես օրինակ դիտարկել տրանսպորտային ծառայությունը (ֆրախտ)):

Հարց 9. Նկարագրեք դեպքում, երբ արտահանման գործարքի կամ ԱԱՀ-ի Օ-ական դրույքաչափով հարկվող գործարքի պարագայում ԱԱՀ-ն հետ վերադարձման ենթակա չէ:

Հարց 10. Նկարագրեք դեպք, երբ իր անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալական պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող:

ԽՆԴԻՐ

«ՇԻՆ» ՍՊԸ-ն ստեղծվել է 2018թ.-ին և զբաղվում է շինարարական և մոնտաժային աշխատանքներով: 31.08.2019թ.-ի դրությամբ ունեցել է ԱԱՀ-ի դեբետային մնացորդ 2 300 հազ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանի հանդիսանում է սեպտեմբեր ամիսը:

1. ա) ՌԴ-ից կատարել է 8415 ԱՏԳ ԱԱ կողմին դասվող սարքավորման ներմուծում, որի ինվոսային արժեքը կազմել է 450 հազ ռուբլի: Նշված ներմուծման հարկային հայտարարագիրը ներկայացրել է 25.09.2019թ.-ին, սարքավորումը սահմանը հասել է 23.09.2019թ.-ին:

բ) Անգլիայից 10.09.2019թ-ին ներմուծել է պահեստամասեր 5600 եվրո արժողությամբ, որի մաքսային արժեքը կազմել է 3100 հազ. դրամ, մաքսավճարը 18 հազ դրամ, ԱԱՀ-ն 638,6 հազ. դրամ:

գ) Նախորդ կետով նշված սարքավորումները հաշվետու ժամանակաշրջանում օգտագործվել է նախկինում կատարված մունտաժային աշխատանքների թերացումների վերացման նպատակով, որը կատարվել է անհատույց, սակայն օգտագործված սարքավորումների միայն 10 տոկոսն է օգտագործվել երաշխիքային սպասարկման ժամանակաշրջանում:

դ) Հարկային հաշվով կատարել է ՀՀ տարածքում ապրանքների ձեռքբերում 56 000 (առանց ԱԱՀ), որի հետագայում պարզվել է, որ իրացումն իրականացրել է շրջանառության հարկ վճարող համարվող կազմակերպություն:

2. Իրացումից հասույթը կազմել է 120 000 հազ. դրամ, որի 30%-ը համաձայն կառավարության որոշման համարվել է ԱԱՀ-ից ազատված գործարք:

Եթե ձեռքբերումների կամ իրացումների մասով խնդրի մեջ լրացուցիչ պայման նշված չէ, ապա համարում ենք, որ գործարքը տեղի է ունեցել հաշվետու ժամանակաշրջանում, հաշվանցման (պակասեցման) բոլոր պահանջները կատարված են:

Արտարժույթի փոխարժեքները որոշելու համար հիմք ընդունել ՀՀ ԿԲ-ի կողմից նշված փոխարժեքները՝ միայն ամբողջական թվերով:

Որոշել հաշվետու ժամանակաշրջանում վճարման (հաշվանցման) ենթակա ԱԱՀ գումարի չափը:

ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄ

1. ա) ԱԱՀ դտ-0
բ) ԱԱՀ դտ - 638,6
գ) ԱԱՀ դտ - 0
դ) ԱԱՀ դտ- 11,2

Հաշվանցվող գումար՝ 649.8

2. ԱԱՀ կտ.-16 800
ԱԱՀ կտ -195
Վճարման ենթակա 16 995
Վճարման ենթակա ԱԱՀ 16 345